

— Ի՞նչ կը տեսնեմ... այդ սոսկալի կարմիր լապտերը որ կը հեռանայ»:

Եւ դարձեալ ետ դէպի սպասման սրահը, իր հին տեղը սպասելու... Այս է ահա վիճակը մարդուն, անօթի, յոգնած, նուաստացած ու չըւարած. եւ այս տեսակի ապրողներու դիակներով կը սնանի տիեզերքը. «մինչ Աստուած իր առանձնութեան մէջ ինքնաբաւ տեղեակ անդամ չէ պատահածին»: Եւ ասիկա այսպէս մինչեւ վերջին մայրամուտը, երբ արեւն ալ յանկարծամահ պիտի դադրի ըլլալէ. բայց ի՞նչպէս — սովահար, քանի որ պիտի չգտնէ հողին կառչած ոչ մարդիկ, ոչ խոտ եւ ոչ իսկ բան մը, որու մոխիրով կարենար սնանիլ: Բայց կայ յոյսի նշոյլ մը դեռ. վերջին երեք տողերը կարծէք կեանքի մը վերադարձը կ'աւետեն.

«Երբ ալ դադրինք մենք մեր տառապանքով ապրելէ ու մեռնելէ՝
մեր հետ անոր ալ (այսինքն արեւին) կեանք տալով
իբր հեզնանք գերագոյն»:

Դժբախտաբար շատ բան չփոթ կերպով եւ յանկարծակի կը յայտնուի ու կ'անհետանայ Օչականի մէջ. կարծէք ոչինչ իւրացուած է. ամէն ինչ պոռթկում է: Ճամբորդը որ հեւ ի հեւ եւ յուսահատօրէն նոյն արարքը կը կրկնէ, կը յիշեցնէ Camus-ի Le Mythe de Sisyphe-ը. ինչպէս շատ դիւրին է նշմարել նաեւ Վոլթէրի «տէիզմ»ին հետքերը, երբ Օչական կը յիշէ յանկարծ եւ կը նկարագրէ դերը Աստուծոյ՝ տիեզերական կեանքին մէջ:

բ) Հետաքրքրական եւ ինքնատիպ է թէ՛ իբր յղացք եւ թէ՛ իբր դադափարախօսութիւն, ինչպէս նաեւ իբր գրական դիւտ, «Պանդարուած վերելակը» (գրուած 1962ին). խորագիրը հանելուկ մըն է. անշուշտ հեղինակին մտքին համար պարզ. մենք անոր կրնանք շատ մը իմաստներ տալ. բայց չենք ուզեր դուշակ ըլլալ: «Պանդարուած վերելակը» ռատիօ սֆէշ մըն է վեց ձայնի համար, երկու ժամանակով: Դէպքը տեղի կ'ունենայ իրարու օտար երկու հայրենիքներու մէջ. Պէյրուս եւ Հայաստան. թուական՝ Ծրդ դար եւ 20րդ դար:

Անցեալի եւ ներկայի այս անսպասելի խառնուրդը կրնայ չփոթութիւն ստեղծել, որովհետեւ անոնքները մեզի առանձին իրականութիւն մը կը պարտադրեն, արդիւնք անոնց պատմական որոշ դոյութեան, դիրքին եւ ընձեռած միջամտութեան: Բայց Օչական կ'ուզէ բոլորովին նոր մեկնաբանութիւն մը տալ պատմական անցեալին, մեկնելով մեզի ծանօթ ներկայ ու բնական վիճակներէ: Ռատիօ սֆէշի դիւտոր գերակատարը ինքն է, հեղինակը, Վահէ Օչական, որ ներկայի սպառող յոգնութենէն եւ կեանքի չափազանց յղի երեւոյթէն այլանդակուած առկայ վիճակէն մտահոգ՝ կը Զանայ ներկայի եւ

անցեալի, երբեք չիրականացած երկու վիճակներու միջեւ հաղորդականութիւն մը ստեղծել, ծնունդ տալով ծաղրական պատկերի մը, թաքուն հեղնանքով, որ զերծ չէ Սոկրատի դաստիարակչական մտահոգութենէն: Կարեւորը սակայն այս չէ. կարեւորը պահն է, վիճակը, մթնոլորտը, կտորին ազդեցիկ պատգամը, գործած տպաւորութիւնը: Արդարեւ կտորին մէջ ոչինչ կարեւոր է. վայրը՝ Պէյրուս եւ Հայաստան, լոկ միջոցներ են եւ ուրիշ ոչինչ. սակայն անհրաժեշտ են այնու որ առանձին իրականութիւններ են եւ կը կազմեն համադրութեան երկու եզրերը՝ ժամանակը, թուականը. եթէ պատմութիւնը Ծրդ. եւ 20րդ դար կ'ըսէ, մեզի համար խանգարուած ժամացոյցի մը շփոթած սլաքին պատահական հանդիպումներն են: Բայց այդ ալ կարեւոր չէ: Հապա անունները. կրնան բոլորովին անտեսուիլ. մեր հեղինակին համաձայն անունները գործածուած են դիւրութեան համար: Հետեւաբար ոչ մէկ դրական վերաբերում պատմականին կամ նոյնիսկ ներկային:

Այս բոլոր ժխտականներով հանդերձ ռատիօ սֆէշը կայ եւ կ'ուզէ բան մը ըսել: Բաժնուած է երկու ժամանակներու: Իւրաքանչիւր ժամանակը կը կանխէ ընտանեկան վիճակի մը համառօտ նկարագրութիւնը, որուն նպատակը եւ դերը, ցրուած եւ իրարու օտար այս թիւնը, որուն նպատակը միութիւն մը տալ է: Առաջին ժամանակ. ժամանակներու նիւթական միութիւն մը տալ է: Առաջին ժամանակ. ընտանիքը կ'ունենալէ ձայնասփիւռի հայկական ժամը, որ նոյն օրը ընտանիքը կ'ունենալէ ձայնասփիւռի հայկական ժամը, որ նոյն օրը ընտանիքը ժամանակը կը սկսի եւ այս անգամ Վաղարշապատի ձայնասփիւռի կայանն է, նշուած է նաեւ ալիքը. «կարճ ալիք 19 մեդր 24»: Եւ ձայնասփիւռը կը յայտարարէ հայ ժողովուրդի պատմութեան մեծագոյն դէպքին՝ Հայ Գրեթու դիւտին 30ամեակը:

Առաջին ժամանակի գերակատարները բացի մասնակցող ձայներէն, երկու հոգի են. տղայ մը եւ աղջիկ մը: Տեսարանի ընդհանուր նկարագրականէն կարծէք ռոմանթիք հանդիպումի մը յահագնութիւնը կը մատնէ զինքը տառապեցնող հիմնական մտահոգութիւնսկոյն կը մատնէ զինքը տառապեցնող, սպառիչ եւ ունը, որ վախ մըն է, սարսափելի եւ խոշտանգող, սպառիչ եւ խթանող անհաւասարակչութիւն պատճառող, լլկիչ, բայց եւ խթանող նիւթ. վախ մը որ հոգեբանական է եւ ֆիզիքական. վախ մը հոգեւոր ընկերաբանական կարեւոր ախտանիշ մըն է, վախ մը մէկ խօսքով տափակ առօրեային զոհը ըլլալու, հասարակութեան ենթադրութիւն տալու, անոր անդէմ մէկ կրկնութիւնը ըլլալու. տարբեր բառերով կոչելու, անոր անդէմ մէկ կրկնութիւնը ըլլալու. տարբեր բառերով խուսափելու վարժութեան կամ ունակութեան կրկնութիւններուն մէկ արդիւնքը ըլլալէ:

Այս վախցող էակը եւ իր այս վախէն փախուստ տուողը, որ չըլլայ թէ ինքն ալ նման անոնց որ պարտուած են կեանքին մէջ՝ հա-

ինքը համոզուած է եւ կը հակադրէ ինքզինքը անոր որ պարզապէս կ'ապրի, կրկնելով այն ինչ որ ուրիշներ ըսած են կամ ըրած, իրմէ առաջ: Եւ այս է կեանքի նոր ձեւը. «Հողին ու Երկնքի կէս ճամբուն տեղ մը կայ... տեղ մը ըլլալու է... ես այնտեղի քրիստոնեան կ'ուզեմ ըլլալ»: Մեսրոպ չ'ուզէր պարզ մարդ մը ըլլալ. կ'ուզէ մարդէն աւելի բան մը ըլլալ, որպէսզի այս խեղճ ու դժբախտ մարդոց օգտակար կարենայ ըլլալ. այս մարդոց՝ որոնք իր աչքին առջեւ կը քայլեցայտին: Ի՞նչպէս:

Հարկ է ամէն բանէ առաջ դուրս ելլել այս բանտէն, այսինքն մեր անձնական սահմանափակութեան օգտապաշտ ու եսասիրական ճղատումներէն ու պահանջներէն: Հարկ է հրաժարիլ Ես-էն եւ իջնել բաղձնութեան մէջ: Ինչո՞ւ: Որովհետեւ ան կրնայ մեռցնել «Իմ մէջի այս հսկայ սէրը». «այլապէս ան է որ զիս պիտի սպաննէ... վերջը, աւելի ուշ կարելի է դուրս ելլել մարդոցմէ: Բայց ոչ առաջ. ո՛չ»: Այս է ահա ծրագիրը այս կեանքին — ապրիլ եւ չապրիլ. այսինքն ապրիլ իբր բաղձնութեան մէկ անդամը, մաս կազմել զգալով, խորհելով անոր հետ եւ միւս կողմէն չապրիլ անհատականը որ կը պղտորէ կեանքը: Ուրիշին օգտակար կարենալ ըլլալու համար, պէտք է որ ամբողջական ըլլայ կեանքի մեր փորձառութիւնը, եւ ասոր համար նախ մին անոնցմէ եւ ապա ուսուցիչը եւ օրինակը անոնց: Ծիշտ ասոր համար հարկ է գտնել անկեղծութեան լեզուն:

Մեսրոպի խօսակից աղջիկը կու տայ առիթը որ Մեսրոպ անդրադառնայ քրիստոնէական կրօնքի հիմնական վարդապետութեան շուրջ. «Պէտք է մեռնիս որ ծնիս, ծնիս մանաւանդ ախոռի մէջ: Խաչելութիւնը ծնունդէն առաջ կու գայ». որուն աղջիկը կը պատասխանէ «կարելի է քու փնտռած լեզուդ է»: Մեսրոպ չի մերժեր, այլ բնական պարզութեամբ կը պատասխանէ «չեմ գիտեր», «կրնայ ըլլալ»: Բայց այս բոլորը պէտք է սպասէ. դեռ ցեխէն վեր չէ ելած. պէտք է որ նախ սկսի ինք ապրիլ. եւ տեսաք թէ ինչ կը նշանակէ Մեսրոպի համար ապրիլ. հետեւաբար հարկ է երթալ Վաղարշապատ, տաք կեանքին մէջ եւ «բռնես զայն ձեռքերովդ, կռուիս անոր հետ որ չյաղթուիս անկէ». «պիտի իշխես մարդոց որ ազատագրուիս մարդոցմէ»:

Երկրորդ ժամանակ. Վաղարշապատի մէջ ենք. ձայնասփիւռը բաց է եւ կը տօնուի հայ գրերու գիւտի 30ամեակը: Խօսնակը բարձրադաշակ կը յայտարարէ, այդ մեծ եղելութիւնը: Մեսրոպ կը ջըղայնանայ եւ կը հրամայէ իր աշակերտին՝ Կորիւնին որ դոցէ. եւ կը դոցուի ձայնասփիւռը:

Այս երկրորդ մասը հիմնուած է ամբողջ հետեւեալ գաղափարախօսութեան վրայ, որ անյայտ ներկայ է ամէնուրեք. — գիրը կը

սպաննէ, կ'աղաւաղէ հարադատութիւնը կեանքին եւ գաղափարին. «լեզուն յաղթահարուած է եղելութենէն, որ իր տարապայման ներկայութեամբ եւ հաստատականութեամբ կը սառեցնէ եւ անխօս կը դարձնէ հաղորդակցական որեւէ փորձ, այնքան որ լռութիւնը կը դառնայ միակ լեզուն». այս է գաղափարը որ վերջերս Georg Steiner կ'արտայայտէ իր «լեզուն եւ լռութիւնը» մենագրութեան մէջ: Օչական անգամ մը եւս նոր մտահոգութեամբ ցոյց կու տայ գիրին եւ կեանքին անհաւասարակ շրջադարձը:

Այս մասին մէջ եւս նոյն մտահոգիչ հարցը կրկին կը վերադառնայ, թէ եւ նոր զգեստաւորումով: Նախապէս ըսած էր թէ մարդիկ դժբախտ են եւ չեն գիտեր թէ ինչո՞ւ դժբախտ են. հիմա կը գրէ. «Մարդիկ երջանիկ չեն, Կորիւն, ու չեն գիտեր պատճառը»: Մեսրոպ այս բոլորին պատճառը կը գտնէ իր գիւտին մէջ: (Մասնական այս պարագայէն, այսինքն հայ գիրերու դիւտէն, կարելի է անցնիլ ընդհանրական տեսակէտի մը. անցքի իրաւունքը ունինք. ըսուեցաւ թէ ամէն ինչ միջոց է, ամէն վերաբերում պարագայական է): Յուսահատական է Մեսրոպի վիճակը. ապրումի, գիտակցութեան, համոզումի, գաղափարի ընդլնումի պահէն է որ, հակառակ իր փոթորկոտ երկունքներուն, փակուած կը մնայ, չի յաջողի բացայայտել իր իսկութիւնը. «դուրս» բառով յայտնուածը խորթ է, երեւոյթ է, լոկ կերպարանք առանց յաջողելու փոխանցել զինք ծնող ապրումին խորութիւնը: «Գիրերը, գիրերը պիտի ազատէին զիս ինձմէ»: Ինչո՞ւ. որովհետեւ «կը կարծէի թէ գրելիքս աւելի կարեւոր պիտի ըլլար քան թէ գիրը»: Մեսրոպ կը տառապի, որովհետեւ մարդիկ աւելի կարեւորութիւն տուին լեզուին, գիրին եւ ոչ մտածութեան, եւ կամ գէթ այդ ներքին տաղանապեցուցիչ գաղափարին՝ որ զինք մղեց գիրի գիւտին: Գիրը Մեսրոպի համար ազատարար դեր մը ունէր կատարելիք. գիրը «պիտի բաւէր բանտարկել ապրումը՝ զայն նուաճած ընկել. գիրը «պիտի բաւէր ազատուելու համար»: Այսինքն գիրին մէջ ըլլալու համար անկից ազատուելու համար»: Այսինքն գիրին մէջ ամփոփելով, «բանտարկելով» ներքին ապրումս որ կենսունակ իմացական գոյութեանս յայտարար նշանն է, գտնել ներքին ազատուցական թիւնը. գիրին միջոցով պիտի բացայայտուէր ու իմաստնաւորուէր ներքին խորութեանս մէջ խարխափող գաղափարը:

Սակայն հակառակ ազատագրումի այս տենդադին ճիգերուն, փակուած կը մնանք մեր առանձնութեան մէջ, անհաղորդական. բառերը կը դաւաճանեն մեզ եւ կը մնանք հիասթափուած, երբ անոնք խօսիլ սկսին մեզի, որովհետեւ բոլորովին խորթ եւ օտար պիտի հնչեն ասիլ

*) Նկատել կու տանք որ Վաղարշապատի ձայնասփիւռը կը տօնէր հայ գրերու գիւտը. եւ դեռ մենք եւս այսօր գիրին գիւտն է որ կը տօնենք. գիրը. հոս այս կէտն է որ կ'ուզէ շեշտել հեղինակը:

նոնք մեզի: Գիրք հետեւաբար ունայն եւ անտեղի երկունք մը եղաւ: Կեանքը բանտարկել գիրին մէջ կը նշանակէ դայն ամլացնել: Օշական սակայն դեռ աւելին կը յայտարարէ հակաբանապաշտ մոթիֆներով, ժառանգուած անցեալէն, եւ ծանօթ շատերու. «խելք ըսուածը այլանդակ, ճարպիկ թղուկ մըն է» որ տակնուվրայ կ'ընէ ամէն ինչ եւ որու ներկայութեան «կտրիճ, չքեղ ու հրայրքոտ երեւակայութիւնն է որ կոյր, խուլ ու համր մուրացկանի վերածուած՝ պիտի քաշկուտուի մեր խոհանոցներու պատուհաններու տակ... հուճկու թիկնեղ ու իմաստուն յիշողութիւնն է որ ծերանոցի հսկայ թքամանին կառչած կռնած լինտերը դողդողալով պիտի կքի լուծեան կէս գիշերին...»: Եւ երկար այս խոկումներէն թելադրուած Մեսրոպ կ'այրէ ամէն ինչ որ դրած է, իր օրագիրը եւ կարգ մը ուրիշ գրութիւններ: Պատահածը իր նկարագրական հանդամանքով այլաբանութիւն մըն է. այրուածը կեանք մըն է, անցեալ մը. «երիտասարդ առողջ տղայ մըն է» որ կը բռնկի խնդալով. Մեսրոպի անցեալն է: Այս արարքով Մեսրոպի մէջ կը մեռնի իր երիտասարդ ու կենսունակ անցեալը...: Երբ այրող բոցերը կը հանգչին, Մեսրոպ «կը գիտակցի թէ աչքերը դուրսած են ու կը փորձեն ճանչնալ մանրուկ միայնակ ու սեւադրեւտ մարդ մը, որ կը սարսուռայ դաղտնի հովի մը շունչին մէջ»: Մազաղաթները այրեցան. կեանք մը մութին ու մոռացութեան ծոցը սուղուեցաւ: Մեսրոպ այժմ պատրաստ է ապրելու. «հիմա կրնամ սկսիլ ապրիլ» կ'ըսէ ինքնիրեն: Բայց ոչինչ որոշ է. եւ իր ըրածը զինքը անորոշութեան մը գիմաց կը դնէ. «ինչ ըրի Աստուած իմ... ո՛ր կ'երթայ այս ճամբան, ո՛ր»:

Մեսրոպ ահաւոր ամայութեան մը գիմաց է եւ ինքզինքը առանձին կը դգայ. կարծէք ոչ մէկ արժէք մնացած է. մութ է ամէն ինչ. «դուրսը պարապ է, հոյակապ բայց ամայի, անլոյս. բանտ մը»: Միակ արժէքը ինքը մարդն է. ոչինչ իրմէ դուրս: Արդարեւ տիեզերական այս մթութեան կը հակադրուի լոյս մը լոկ եւ այդ «լոյսը ներսէն կու գայ»:... «Ոչ իսկ վերէն»:

Այս է կը խորհիմ այն ինչ որ է եւ կ'ուզէ ըսել Օշական: Քիչ մը պէտք եղածէն աւելի ծանրացանք այս երկու գրութիւններուն վրայ, որովհետեւ առանձին առնուած դեռ կը գիմանան որոշ քննադատութեան մը. «Քառուղի»ն ամբողջով միւլ գրութիւններուն համար*, մէկ-խօսքով, թէեւ քիչ մը տատամսելով, որովհետեւ կան ինչ ինչ արժէքներ, կրնային ամենեւին ալ գրուած չըլլալ, այնպէս ինչպէս կը

* Պարմ Համուտի կօշկակարներու պարը (գրուած 1965ին), Մեռնող մամբէկմի հասցէին (գրուած 1965ին), Բարկուքիւմ (գրուած 1968ին), Պէյրուք-Փարիզ (գրուած 1968ին), Սերունդ (գրուած 1968ին), Խեմքը (գրուած 1968ին), Նոր Մանչուկը (գրուած 1970ին), Պրիսմակ (գրուած 1971ին):

ներկայանան, անկարելի կը դարձնեն տեսութիւնը «քառուղի»ին առաջարկած ճամբաներուն:

Բայց ինչպէս Բրուտոս՝ Անտոնիոսի համաձայն պատուաւոր անձ մըն էր եւ Շէյքսպիրի առիթ կու տայ որ երկար ճառով մը, միակը դուցէ իր տեսակին մէջ, քանդակէ վերլուծելով դրական ու բացասական տեսակէտները պատմական ու անձնական արարքի մը՝ իր բաղմակողմանի հարցերով, այսպէս ալ մենք դիտենք թէ Օշական դարգացած անձ մըն է եւ հակառակ շատ մը արտառուցութիւններու՝ կը մնայ միշտ դրագէտ մը, որ կ'ուզէ բան մը ըսել, նոր ճամբայ մը բանալ, գործածելով նոր լեզու, որուն դեռ մենք ընտանի չենք, առաջարկելով մեզի դրական ձեւ մը եւ արտայայտութեան եղանակ մը, որ թէեւ կրնայ չփոթութեան մատնել ընթերցողը, բայց միշտ հետաքրքրական, վիճելի, եւ առիթ դրական ճառի մը Օշականի մասին, ոչ անշուշտ Շէյքսպիր մը ըլլալու յաւակնութիւններով:

Օշականի «Քառուղի»ն գրական-քննադատութեան դիմաց

«Քառուղի»ն համադրաբար եւ իր ամբողջութեանը մէջ առնուած մեզ կը մղէ հետեւեալ անդրադարձութիւնները կատարելու եւ խորհրդածելու հեղինակին հետ, ջանալով դրական մերձեցումի կարելի սահմաններուն մէջ որդեգրել նաեւ անոր ոճը:

Դիւրին գրականութիւն թէ դժուար, ըմբռնելի, պարզ ու հաղորդական լեզու թէ խորհրդաւոր խրթին արտայայտութիւն: Քերականութիւն մը հիմնուած մտքի՞ օրէնքներուն վրայ, թէ ընդարձակուած, ճոխացած, դերադանցուած, երեւակայութեան ծնունդ տեսութիւններու պատկերացումի ճիշդ. բառերու անմիջականութիւն եւ դադափարներու քանդակում առանց վերլուծումի կամ բացատրական եզրերու միջամտութեան, բայց հարցայարոյց, խթանիչ եւ միանգամայն գոյութենական. մարդ արարածին ինքզինք պարտադրող անխուսափելի իրականութեան գիմաց մտադրաղ, դիտակցողութիւնը ինքնակեդրոնացումի առաջնորդող խուզարկու աչքերով, կեանքը ծանրացնող բոլոր էակներու կարելի հանդիպումներով թանձր եք ծանրացնող բոլոր էակներու կարելի հանդիպումներով մը առինքնող բեւակայութեամբ պայծառացած, հեռաւոր հորիզոնի մը առինքնող ու ամօքիչ կայծկլուուն մայրամուտի մը գրական պատկերացում մը չէ, այլ մարդկային գոյութեան անհեթեթ վիճակի անբացատրելի կացութեան, յուսալքուած ուժերու, անյաջող փորձերու, կրակոտ երազներու խամրացած մայրամուտը, որ ահռելիօրէն կը ճնշէ գոյութեան վրայ, հակաբանապաշտ մտահոգութիւն մը որ կը մատնէ իր իսկ առաքելութիւնը եւ կը դառնայ խրթին, յղի գոյութենական խորհուրդով:

Մրադրի բացակայութիւն, պաղ ու անջատ նկարագրութիւն ի-

րերու, պատահարներու ու կեանքին: Որոնք սակայն միացած իրարու՝ կը տպաւորեն, կը պարտադրեն իրենք զիրենք ընթերցողին վերայ, հանգուցաւոր իրականութեան դիմաց դնելով զինքը:

Բառը ծանր է. արտայայտելի դադափարը հազիւ կը շնչէ սեղմ բառի մը կապանքներուն մէջ: Գրողը կ'ուզէ արդի ըլլալ, հակահամաձայնական. եւ ճիշտ ասոր համար կ'ուզէ եւս արտառոց ըլլալ: Սակայն իրապաշտ մտահոգութիւն մը կը զգացնէ անկեղծութիւնը գրողին: Ասով հանդերձ անտանելի կը դարձնէ ընթերցումը գիրքին:

Նիւթի միութիւն. աւելորդ է փնտռել այդ տողերուն մէջ, առաջարկուած նիւթին եւ դադափար արտայայտել ուղող բառերուն մէջ: Ընթերցողը ինքն է որ պիտի տայ այդ միութիւնը, իր մասնակցութեամբ եւ գործակցութեամբ անկերպ գրական մարմինը (քանթեան իմաստով) ձեւ ու միութիւն մը կը ստանայ: Գրական էջին ստեղծած ու գործած տպաւորութիւնը, եւ ասոր արձագանգը ընթերցողի ներաշխարհին մէջ, ծնունդ կու տան անհաւասարակը՝ ունեւորութեան մը ընդմէջ առարկայականին եւ ենթակայականին: Պատճառը. որովհետեւ գրողը կ'արտայայտուի առաւելապէս մղուելով յայտնատեսութենէ, եւ առանց գուցէ իսկական ներշնչումի, բայց անտարակոյս արտայայտուելու բուռն պահանջէ: Արդէն իսկ Օչական անիմաստ կը նկատէ ներշնչում բառը:

Հետեւաբար գրականութիւնը պոռթկում է, տեսակ մը ընդվզում եւ նաեւ ատելութիւն չըջապատող կաշկանդիչ ուժերու դէմ. անտարակոյս ճիշդ, եւ որով անդէկ հոսանք մը, թէեւ բերրի եւ պատրաստ նոյնիսկ, ոռոգելու մեռած ու ցամքած մեր ներկայ գրական անդամատանը:

Արդարեւ Օչականի գրականութիւնը յղի է նոր մտահոգութիւններով, այժմէական, ընկերային եւ անհատական իրականութեան մը, թէեւ երբեմն խոսքն էջն է որ կը ներկայացնէ մեղի: Շատ զգալի է Քաֆքայի, Սարթրի կամ նոյնիսկ Բոս Կրիշի ներկայութիւնը: Բնական է հոս ընդարձակ վերլուծումի մը կարելիութիւնը չունինք, եւ Օչականի հետ այս գործը դժուար է: Կ'ուզենք սակայն նշել Օչականի այժմէականութիւնը: Ցաւալին այն է որ ինք չ'ուզեր հասկընալի ըլլալ. մութ է. նախադասութիւն, կէտադրութիւն, երբեմն իրեն անգամ անծանօթ են. կարծէք չ'լերադարձ մը կայ ապագայապաշտ հոսանքին եւ զայն կանխող 1860-1870 տարիներուն Իտալիոյ մէջ յայտնուող «Հերարձակներու» խմբակին (Scapigliatura) նոր փորձառութիւններու եւ զգացական երեւոյթներու ի խնդիր. յաճախ բուռն առանց երկիւղի, որ յանկարծ դայթակղի պարզամիտ ժամանակակից ամէն բանի դիւրաւ յարմարող ընթերցողը: Արդարեւ Օչականի նկարագրութիւնները, պատկերները, փոխաբերութիւնները զուրկ են արժէքներու աստիճանաւորումէ կամ պատշաճութենէ, տե-

սակ մը անտարբերութիւն ընկերային պահանջներու հանդէպ եւ հակահամաձայնական ամէն բանի մէջ. երբեմն նոյնիսկ դուժգոյն ըլլալու աստիճան, երգիծաբանելու դիտումով գրական այլանդակութիւններու կը յանդի:

«Մերն է դարը ու դադափը

անդուր աչքը

որ ձեր խոնաւ պատրանքներէն ճաղատ հայելի կը շինէ

փայլուն անիւ ուղեղիս մէջ

ժանգոտ մամուռ ծեռ խարխիւր վեր կը քաշէ ճահճներու լիարդէն

մանր ու չոր ականները վանկերու դորդերու տակ պահած ենք

զգոյշ զգոյշ քալեցէք մշուշին մէջ խեղճներու հոգեվարքին

ժամկոչ աղբար ժամկոչ աղբար ետ քուն մտիւր

խուլ են մարդիկ, չե՞ս տեսներ...»: (Նոր մանչուկը)

Օչական ունի նաեւ դանդաղ, բողոք, տեսակ մը իմաստասիրական խոհ եւ կ'ուզէ ազատել, չոպել մարդը առօրեայի անհեթեթութիւններէն, միապաղաղ ընթացքէն որ ահռելիօրէն կը ջանայ բանական դոյութիւնը անասնականի վերածել, մեքենայական առկայութեան մը:

Ա՛յս է կեանքը —

Ուտել շարժիլ դրամ շահիլ, ուտել նստիլ ու պառկիլ

յետոյ խօսիլ այդ մասին, մարմնի մասին

կատակելով դրազեցնել ու համոզել

թէ երջանիկ է այդ մարմին:

Զկայ սակայն պատասխան կամ դժուարութեան վերլուծում, այլ լոկ հարցի առաջարկ, նկարագրութիւն, առանց վախի ծիծաղելիին մէջ իյնալու: Ահա ուրիշ նկարագրական մը կեանքին, երեւոյթով քանդակիչ եւ կուռ, վերացական, չըսելու համար անհասկնալի, բայց փիքասսոյի մը կամ Սալվաթոր Տալիի վրձինին ծարաւ:

Կեանքը նիդակ ու խմոր, բոյրէ շաղախ լուրթեան ճիչ

անտես ջուրի ցուքերու մէջ սրսփուն: (Պրիսմակ, մակարդակ մէկ)

Կամ աւելի զորութեանական մահադոյժ պատգամի մը ազդեցութեան տակ, կեանքը դիտուած մահուան հորիզոնին ընդմէջէն եւ ապրիլը իբր ժամանում այդ կէտին, բայց ամէն ինչ անորոշ է եւ մոգական

«Այս է ուրեմն ապրիլը —

Վախի կլոր պարապութիւն

խենթի մեռած ուղեղի նկուղներու ցանցին մէջ ուղեկորոյս,

տեմ անհասկնալի գրութիւնները: Անպատճառ բան մը հասկնալու պահանջը չէ որ կը ներկայացնեմ ասով, այլ լոկ բանականութեան մը արդարացուցիչ արտայայտութիւնը:

«Մակարդակ զերօ»ի բացատրական հանգամանք ունեցող առաջին տողերուն մէջ կը կարդանք հետեւեալը. «Անշուշտ որ չխենթացաւ Կոմիտաս իրեն պէս յեղափոխական դերու արուեստադէտ՝ պողպատէ ջիղ կ'ունենայ, կը հեղնէ մարդկային տառապանքը, ամէն ինչ միջոց է, հում նիւթ — մանաւանդ կեանքը»: Եւ կը սպասենք իմաստը ամբողջացնող յաջորդական բացատրութեան մը: Բայց Օշական այդ դոճակութիւնը չ'ուզեր տալ իր ընթերցողին, մանաւանդ թէ աւելի մեծ հարցականի մը մէջ կը նետէ զինքը: Արդարեւ այսպէս կը շարունակէ Օշական. «Այնպէս որ դուռը կը բացուի, բայց ներսը ուրիշ բան կայ: Ի՞նչ կայ խենթութենէն անդին...»: Եւ ահա դարձեալ ծանր սիւսքան մը: Պատասխանը. նոյնքան հիասթափեցուցիչ, «քալել դէպի վերջին կրածեփ պահակատունը»: (Մակարդակ զերօ): «Մակարդակ զերօ» Կոմիտասի մասին է, կամ ճշգրիտ եզր մը գործածած ըլլալու վարժութենէս հրաժարելով, կը թուի կամ հաւանական կ'երեւի որ հեղինակը իր խորքին մէջ նպատակ ունեցած պէտք է ըլլայ Կոմիտասի մասին ալ բան մը ըսելու. անշուշտ Կոմիտասի վերջին օրերու մասին, երբ համաձայն ցարդ յայտնուած կարծիքներուն եւ մեր գիտութեան, Կոմիտաս կորսնցուցած էր բնական ընթացքն ու հաւասարակշռութիւնը մտքին: Օշականի համար, մինչդեռ քիչ առաջ լսեցինք թէ Կոմիտաս չէ խենթացած. եւ հիմա կու տայ նաեւ մեզի պատճառը. Օշականի համաձայն խենթութիւնը միակ ձեւն է ապրելու.

«— Կ'ըսէի որ խենթութիւնը միակ ձեւն է ապրելու... միակ կարելիութիւնը խելքը պահելու անպատակ միակ յոյսը յոյսէն անդին» (Մակարդակ զերօ):

Խօսողը Կոմիտասն է, որ համաձայն Օշականի՝ եթէ մէկ կողմէն ոչ խենթ կը նկատուի, միւս կողմէն մէկն է, որ կ'ապրի խենթութիւնը, որովհետեւ ան միակ ձեւն է ապրելու: Կ'ուզենք բան մը հասկնալ. բայց մուրթ է եւ քիչ մը աւելի լոյսի կը կարօտինք:

Համաձայն ենք, կեանքը անհրաժեշտօրէն պատճառաբանութիւն չէ (Պրեխտ մը այդ մասին ըսաւ իր խօսքը): Կեանքը կը կրէ իր մէջ դեռ չյստակուած խորհուրդ. գոյութիւնը իր բնադանցական եւ էակաբանական պահանջներով առեղծուած մըն է: Մեզի ժամանակակից կամ մեր անմիջական անցեալին պատկանող գրադէտ-բանաստեղծ իմաստասէրներ այդ հարցը դրին եւ դեռ կը շարունակեն առաջարկել: Կեանքի անհեթեթ-հակասական իրականութիւնն ու մահուն ներկայութիւնը սպառնական, աւելորդ կը դարձնեն բանականութեան մը կարելիութիւնը կամ նպատակի մը ներկայութիւնը գո-

յութեան մէջ: Բայց Օշական կը չափազանցէ. իրմով կը դադրի բացայայտական ամէն կարելի փորձ կամ նպաստ, մէկ խօսքով երբեմն բոլորովին անըմբռնելի է: Համբերութիւն ու շունչ հաւաքած փորձենք կարդալ.

«— Վերէն կախուած աչքը դոցէ խենթ ես ինչ ես չշարժիլ բնա. ժամանակը երկաթ ծեփէ ջրհորին կրանիթ ճեղքէ կղպէ մի սեղմեր ուր կոթնիմ մի խնդար պահուրտեցա՞ր աչքիս ետեւ մուրթ է կը խեղդեն կտոր կտոր մարմին հիւսէ շունչով եկան եկան ի՞նչ ընեմ մարմինս իմս չէ կաթսային տակը ձայնը գոտիս նետէ դաշտին տնակ ես թաղաւոր շղթաներու եկայ (շուք սարդոստայն կեդրոն հայելին կոյր աչքէ կը փախիս (ի՞նչ կը շարժի ճերմակ աւազ յորձանուտին մեռած թեւեր ձայնը ձայնը ճիւղաղ սերմի հանգոյց կրակ նիզակ կլոր կլոր երազէ (սաւեմ սարսափ առտու — սեւ դոցէ դոցէ բաց է լմնցաւ ա... ա) ի՞նչ կար ճամբայ կապալ վարէն տղաս խնդա մլում պիկէ դուռը ես եմ ճերմաս այո) հօ... վարէն տակը անշուպահի քիչ մը հասուս... հեռու է մուրթ) ոչ ալ չկայ հրփրի պաղէ մայրիկ բացէք անդին խեղճ է այո այո ոչ գոփակաթ)... ոչ» (Մակարդակ զերօ):

Այս կտորը առնուած է Մակարդակ զերօ-էն, որ տրամի հանգամանք ունի. դերակատարը ինքը Կոմիտասն է որ կը խօսի ինքնիրեն հետ, այսինքն Կոմիտասին հետ եւ խօսակցութիւնը հեռաձայնով կը կատարուի: Գրականութիւնը տուած է մեզի խենթերու նկարագրութիւնը, նոյնպէս երաժշտութիւնը, և զգացուցած արուեստի բարձրութիւնը: Հոս ոչ մէկ գիւտ կայ, մանաւանդ թէ ոչինչ կ'ուզէ հասկնալ մեզի. զգալի շօշափելի, առարկայական իրականութենէն դուրս ենք, երազային իրականութեան մէջ: Օշականի գրականութիւնը իր ամբողջութեան մէջ ձգտում մըն է գերբնական ըլլալու, ենթագիտակցութեան անորոշ ու երազային մէկ մղումը, անոր ներկայացումի մէկ փորձը եւ գրելը այդ երազանքին իրաւ մէկ ցոլացումը. ասակից անկարող զօգելու արտաքինն ու ներքինը, առարկայականն ու ենթակայականը, կը ծնի տեսակ մը յոռետեսութիւն հանդէպ կեանքին, իր ներկայ վիճակին մէջ, որ կը յայտնուի ծածուկ ամէնուրեք: Գիրքն ու լեզուին դէմ մղած իր պայքարով, եւ հաղորդակցութեան մը կարելիութեան բացակայութիւնը յայտարարելով, ահաւոր պարապութեան դիմաց կը գտնէ ինքզինքը եւ որով ծայրայեղօրէն յուսահատ, քանի որ ամէն ինչ անիմաստ է. «Երբ մարդիկ սկսին մտածել, չափել ու վերլուծել իրենց գոյութիւնը, հասկնան թէ կեանքը զուրկ է իմաստէ, առանց երբեք գիտնալու թէ ինչո՞ւ կարեւոր չէ ատիկա...»:

Օշական կ'ուզէ փոխել կեանքը, բայց իր յոռետեսութիւնը արդելք կը հանդիսանայ իրեն. այն ատեն կը ջանայ դէթ կեանքին տալ նոր մեկնաբանութիւն մը, առանց անշուշտ համոզուած ըլլալու. ո-

րովհետեւ կեանքի մէջ ամէն բան դատաւարտուած է մեռնելու, ամէն ճիշդ ունայն է: Այո, պիտի դան հերոսներ, նորերը, որոնք պիտի ուզեն մարող կրակը վառ պահել, բայց ունայնորէն. ասոնք եւս «զոհ պիտի երթան առանց գիտնալու թէ զոհ են»: Այս է կեանքը եւ ժամանակը մեր պատմութեան, «ժամանակը լուռութիւն է, կոյս ու յղի լուռութիւն: Վայ անոր որ զայն բառերով ու գիրերով կը լեցնէ»: (Պանդարուած վերելակը):

Օչական մեզի կ'առաջարկէ գրականութիւն մը, բաղմակողմանի եւ հետաքրքրական թէ՛ իբր գրական երեւոյթ եւ թէ՛ իբր արտայայտութեան եղանակ եւ թէ՛ իբր մտածութիւն: Անտարակոյս ինք եւս շատ հետաքրքրական անձ մը ըլլալու է եւ խելացի, խորամանկ չըսելու համար, որ կը յաջողի հիասթափել իր ընթերցողը. պատահական աղնարկներ, արժէքաւոր մտածութիւն մը, դիւտաւոր այլաբանութիւն մը, ընկերային ու հոգեբանական բիծի մը իրապաշտ նըկարագրութիւնը, հակառակ անոր որ երբեմն եւ անմիջականորէն ոչինչ կ'ըսեն ընթերցողին, կը յաջողին սակայն չփոթութեան մը մատնելու զինքը, որ տփուկ իր ոչ-հասկցողի վիճակէն, կը ջանայ նմանութիւններ փնտռել այս կամ այն հեղինակին մօտ, լուսաբանութեան մը ծարաւով. եւ Օչական շատ դիւրաւ կու տայ ուղղութիւնը՝ թէ որուն պէտք է դիմէ իր ընթերցողը. Ֆրոյտէն սկսեալ, Քաֆքա, Բօպ Կրիյէ, Քամիւ, Սարթըր, մինչեւ իսկ Սամուէլ Պէքէթ. այս վերջինը՝ յատկապէս «Պանդարուած վերելակ»ին համար: Այս տարբերութեամբ որ եթէ Պէքէթի համար բառն ու դիրքը դեռ (բայց թէ ո՞րքան, ինք եւս Պէքէթ յոռետես է) կը շարունակեն արժէք մը ներկայացնել եւ միակ առակ միջոցը արտայայտելու կեանքի անիմաստ եւ անհետեւ կացութիւնը, Օչականի համար կարծէք այս վերջին կարեւորութիւնն ալ կը դադրի եւ կը փակուին համատարած եւ ողբերգակ առանձնութեան մէջ, առանց հաղորդակցութեան մը կարելիութեան: Եթէ սակայն մեծ անունները կը խուսափին չփոթութենէ, Օչականի մօտ հակառակէն կը նշմարուի դադափարներու տարտամ, չըսելու համար չփոթ, ներկայութիւնը: Պահ մը կը փորձուինք գոյութեանական այդ խթանիչ հարցերը նկատելու իբր լոկ արտաքին ծպտում մը առանց խորքի: Այս մեր մտածութեան կը նպաստէ արդարեւ, Օչականի գործածած լեզուին անօրոգիական բնոյթը: Դրականորէն ոչինչ կրնանք ըսել այս մասին. կ'ուզենք սակայն նշել թէ Օչական իր գրականութեամբ բոլորովին անձնական փնտռողի առաջին հանգրուաններուն մէջ է: Գործողութիւնը իր բոլոր թափով ներկայ է. ներքին անդադարձութիւնը կ'արտայայտուի ամբողջապէս գրութեամբ ստեղծուած իրականութեան մէջ:

Օչականի համար, կը խորհինք, ընթերցողը ունի իր առանձնաշատուկ դերը, որ պարզ կրաւորական հանդիսատեսի դիրքէն բոլոր-

րովին տարբեր է. ընթերցողը պէտք է ինքզինքը դնէ արտայայտուած իրականութեան հանգոյցին մէջ իբր բանի մը, որուն ինք եւս կը պատկանի: Ասով գրելը խթան մը կը հանդիսանայ անդադարձութեան եւ գրականութիւնը կը դադրի պարզ քնարական թռիչք մը ըլլալէ եւ կը ստանայ իր հիմնական դիմագիծը, գործելով տուեալ ընկերային վիճակին մէջ իբր անձնական եւ ընկերային հաւաքական փորձառութիւն: Պիւթօր իր գրական-քննական էջերուն մէջ (յաջորդաբար հաւաքուած եւ հրատարակուած Répertoire տիտղոսով) այսպէս կը գրէր 1959ին. «Ձեմ գրեր վէպեր դանոնք ծախելու համար, այլ որպէսզի ստանամ (այսինքն ձեռք ձգեմ) միութիւնը կեանքիս մէջ»:

Կը խորհիմ, եթէ ոչ նոյնը, դէթ նման է պարագան Օչականի. տփուկ դիրքը հանդէպ անցեալին կը վերածուի, թէեւ ոչ այնքան բացայայտ, քննադատութեան մը որ կ'ուզէ արմատախիլ ընել մարդուն մէջէն իրերու հանդէպ ցոյց տրուած աւանդական ու միօրինակ վերաբերմունքը. առաջարկելով, թէեւ, խանդարուած, թէեւ դեռ ոչ ամբողջապէս յստակ նոր մերձեցում մը իրականութեան հանդէպ աւելի գոյութեանական.

«Ձեզմէ առած հայութիւնը՝

ակռայի դեղ զոր կը ցողուենք անմիջապէս

եթէ կլլես տես ինչ կ'ըլլաս քահանայ ու վարժապետ

մաշած խարտոց նոր օրերու պողպատին վրայ կը հազաք

կաղանդ Պապա ալ ամէնքի դուն քեզմէ

նստի որ լաց ճու ծպտումիդ իրաւութեան վրայ

երբ կեղծիքը կը կեղծես ու դեռ մարդիկ կը հաւատան թէ այդ դուն ես».

* * *

Կը խոստովանիմ, ես Օչականը չեմ ճանչնար. բայց իր «Քառուղի»ն զիս հետաքրքրեց: Ոչինչ կարդացած եմ Օչականի մասին կամ գրական քննադատութեան մը հանդիպած իր մասին: Գիտեմ սակայն որ 1956ին հրատարակած է «Պատուհանը» եւ 1962ին «Քաղաքը». այս վերջինը կարդացած եմ եւ ձգած մէկդի: Նոյնը պիտի պատահէր «Քառուղի»ին, եթէ չըլլային «Պանդարուած վերելակը», «Մայրամուտը» կամ «Նոր Մանչուկը», որոնք ինծմէ անկախ, կրկին անգամ ուշադրութիւնս իրենց վրայ հրաւիրեցին:

«Քառուղի»ի վերլուծումի եւ քննադատութեան ընթացքին շատ բան ենթադրեցինք, գուշակեցինք, ուղեցինք եւ փորձեցինք հասկընալ մեզի կարելի չափանիշերով եւ սահմաններուն մէջ: Դեռ շատ մը

հարցեր բաց կը մնան եւ առարկայ մասնական քննութեան եւ վիճաբանութեան: Կը կարօտինք Օչականի անձնական միջամտութեան, հարցերու ամբողջական լուսարանութեան մը համար:

Ձունինք վերջին խօսք. չափազանց դասական պիտի ըլլար: Օչականի ի նպաստ եւ հակառակ կարծիքներ իմ մէջս անգամ դեռ իրարու դէմ կը կանգնին: Եւ այս երկուութիւնը կը յուսամ յաջողած ըլլալ ներկայացնել, առանց բացայայտ դիտումի, խորհրդածութիւններու ընթացքին:

Օչական հետաքրքրական է ամէն անգամ երբ ապրուած ներկայի գիտակցութիւնը կը դառնայ. անտանելի է սակայն եւ տանջող, երբ իր այլաբանութիւններով եւ փորձառական (experimental) գրականութեամբ եւ յառաջապահ լեզուով, կը ջանայ փոխանցել մեզի իր ներաշխարհը:

Ասկէ ետք, խօսքը վահէ Օչականին:

Հ. Ռ. ԱՓԱՅԷԼ ԱՆՏՈՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՓՇՐՈՒԱԾ ՔՆԱՐ

(ԵՂԵՐԵՐԳ ԴՈՒՐԵԱՆԻ)

ԵՐՐՈՐԴ ԵՂԱՆԱԿ

ՇՈՂԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾ

Ո՛վ իմ Աստուած շողերու
Նայէ՛ աչքիս աւազանին ամպամած,
Նայէ՛ հոգւոյս փթթումներուն երկիւղած.
Թող վերստին պայծառանամ ու խայտամ,
Եւ վերստին ծաղկի հոգիս, արփխանամ:

Ո՛վ իմ Աստուած շողերու
Փըշուր փըշուր տարրալուծուած եմ ահա,
Մարմինս առնէ թող մառախուղն անոպայ,
Բայց ես անհուն բոյրի, շողի կարօտով
Քեզի կու գամ, կը տրոփէ սիրտս անձուկով:

Բայց աչքս յանկարծ կ'ամպոտի
Ու չես երեւիր դուն, ո՛վ Աստուած շողերու,
Աստուած բարի, Աստուած դողդոջ սրտերու.
Քընարս ինչո՞ւ կը սարսըռայ ու կ'ողբայ,
Եւ հոգիս զերդ ծով մ'ալեկոծ կը գողայ:

Կը խարխափեմ ես արդէն,
Ու աչքերդու գիշերին մէջ, ա՛հ, կրկին
Այտերուս վարդը կը փնտռեմ լալադին,
Հանգած է հին բոցն ալ, որ թռիչք ինձ կու տար,
Հեւք մը խուլոտ կը չափէր սիրտս յամբարար:

Ո՛վ Աստուած իմ, Սէր անհուն,
Շանթեց որոտն ողբերգութեանս դալարուն,
Եւ ես մահուան երգիչ, մահուան որս թասուն,
Առած զէնքեր հըրատ՝ քեզի դէմ ելայ,
Ոչինչըս ես՝ ամբաւիդ դէմ կանգնեցայ: